ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 14.06.2021թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի
թիվ ՍՑ-ՆԳ-2021/150

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի, 09.06.2021թ. թիվ 26/26-1/9256-2021 գրությամբ «ԿԻՐ-ՔԱՐ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. <u>ՀՀ ֆինանսների նախարարության կողմից ներկայացված փաստերը և պահանջը.</u>

ՀՀ ֆինանսների նախարարությունը, «Բնապահպանական ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկի 31.05.2021թ. թիվ 1-01/27Ա/157 գրության հիման վրա 09.06.2021թ. թիվ 26/26-1/9256-2021 գրությամբ նախաձեռնել է «ԿԻՐ-ՔԱՐ» ՍՊԸ-ին (հետայսու նաև՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. <u>«ԿԻՐ-ՔԱՐ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>

«ԿԻՐ-ՔԱՐ» ՍՊԸ-ի կողմից ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի սույն որոշումը կայացնելու օրվա դրությամբ գրավոր դիրքորոշում չի ներկայացվել:

«ԿԻՐ-ՔԱՐ» ՍՊԸ-ն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2021/150 ընթացակարգի շրջանակներում 14.06.2021թ. ժամը 09:40-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

3. <u>«Բնապահպանական ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>

«Բնապահպանական ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկը (հետայսու նաև՝ Պատվիրատու) ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 31.05.2021թ. թիվ 1-01/27Ա/157 գրությամբ հայտնել է հետևյալը.

«Հայտնում եմ, որ «ՀՀ ԲԾ-Ա-ՀԲՄԱՇՁԲ-21/13-1» ծածկագրով գնման ընթացակարգի շրջանակներում, սույն թվականի ապրիլի 28-ին գնման ընթացակարգի ընտրված մասնակցին՝ «ԿԻՐ-ՔԱՐ» ՍՊԸ-ին, գնահատող հանձնաժողովի քարտուղարի կողմից ուղարկվել է պայմանագիր կնքելու առաջարկ և պայմանագրի նախագիծ:

Գնման ընթացակարգի հրավերով նախատեսված է եղել կանխավճար, ուստի «ԿԻՐ-ՔԱՐ» ՍՊԸ-ին տրվել է 15 աշխատանքային օր որակավորման, պայմանագրի և ցանկության դեպքում կանխավճարի ապահովումների և պայմանագրի հաստատված տարբերակի ներկայացման նպատակով:

Սույն թվականի մայիսի 19-ին ծանուցման ժամկետը ավարտվել է և մասնակցի կողմից չի ներկայացվել վերոնշյալ փաստաթղթերը:

Սույն թվականի մայիսի 21-ին հրավիրվել է գնահատող հանձնաժողովի արտահերթ նիստ, որի ընթացքում գնահատող հանձնաժողովը «ԿԻՐ-ՔԱՐ» ՍՊԸ-ի հայտը մերժել է և ընտրված մասնակից է ճանաչել 2-րդ տեղ զբաղեցրած մասնակցին:

Հիմք ընդունելով ՀՀ գնումների օրենսդրությունը՝ կից ներկայացնում ենք տեղեկատվություն «ԿԻՐ-ՔԱՐ» ՍՊԸ-ի վերաբերյալ, ինչպես նաև գնման ընթացակարգի արձանագրությունների պատճենները և առաջարկում «ԿԻՐ-ՔԱՐ»

ՍՊԸ-ին ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում»:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2021/150 ընթացակարգի շրջանակներում 14.06.2021թ. ժամը 09:40-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. <u>ՍՑ-ՆԳ-2021/150 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

ՍՑ-ՆԳ-2021/150 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. «Բնապահպանական ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկի կողմից հայտարարվել է «ՀՀ ԲԾ-Ա-ՀԲՄԱՇՁԲ-21/13-1» ծածկագրով գնման ընթացակարգ (հետայսու նաև՝ Ընթացակարգ), որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «ԿԻՐ-ՔԱՐ» ՍՊԸ-ն:

2. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 21.05.2021թ. նիստի թիվ 5 արձանագրության 1-ին կետի համաձայն՝ «ՀՀ-ԲԾ-Ա-ՀԲՄԱՇՁԲ-21/13-1» ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում սույն թվականի մարտի 31-ին «ԿԻՐ- ՔԱՐ» ՍՊԸ-ն ճանաչվել է ընտրված մասնակից:

Սույն թվականի Ապրիլի 28-ին վերոնշյալ մասնակցին ներկայացվել է պայմանագիր կնքելու առաջարկ և պայմանագրի նախագիծը: Մասնակցին տրվել էր 15 աշխատանքային օր՝ պայմանագրային երաշխիքների և իր կողմից հաստատված պայմանագրի ներկայացման համար, քանի որ մրցույթի հրավերով նախատեսված է եղել կանխավճար (ՀՀ գնումների մասին օրենք՝ 36-րդ հոդված 3-րդ մաս):

Սույն թվականի մայիսի 19-ին՝ ժամկետի ավարտի օրը, ընտրված մասնակցի կողմից չի ներկայացվել անհրաժեշտ փաստաթղթերից և ոչ մեկը:

3. Նույն արձանագրության 2-րդ կետի համաձայն՝ գնահատող հանձնաժողովը, հիմք ընդունելով ՀՀ գնումների մասին օրենքի 36-րդ հոդվածի 2-րդ մասի, 34-րդ հոդվածի 7-րդ մասի և 31-րդ հոդվածի 1-ին մասի դրույթները, մերժել է «ԿԻՐ-ՔԱՐ» ՍՊԸ-ի հայտը և ընտրված մասնակից ճանաչել գնման ընթացակարգի շրջանակներում 2-րդ տեղ զբաղեցրած մասնակցին՝ «ՄԵՐՁՄՈՍԿՈՎՅԱՆ» ԲԲԸ-ին:

4. «Բնապահպանական ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկը, ղեկավարվելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 45-րդ կետի դրույթով, 31.05.2021թ. թիվ 1-01/27Ա/157 գրությամբ լիազորված մարմին է ներկայացրել Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի թիվ 5 արձանագրությունը, որով Ընկերության հայտը մերժվել է, և որոշ փաստաթղթեր:

3. Գործի լուծման համար էական նշանակություն ունեցող փաստը Պատվիրատուի կողմից չի ներկայացվել:

<u>5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.</u>

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 09.06.2021թ. թիվ 26/26-1/9256-202 գրությունը, «Բնապահպանական ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկի 31.05.2021թ. թիվ 1-01/27Ա/157 գրությունը, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե ՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը սույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ եթե ընտրված մասնակիցը պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծն ստանալուց հետո՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում, չի ստորագրում պայմանագիրը և պատվիրատուին ներկայացնում պայմանագրի ապահովումը, ապա նա զրկվում է պայմանագիրն ստորագրելու իրավունքից: Պայմանագրով կանխավճար նախատեսվելու դեպքում սույն կետով նախատեսված ժամկետը սահմանվում է 15 աշխատանքային օր:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (հետայսու նաև՝ Կարգ) 32-րդ կետի 12-րդ ենթակետի համաձայն՝ ընտրված մասնակցին պայմանագիր կնքելու առաջարկը և կնքվելիք պայմանագրի նախագիծը հանձնաժողովի քարտուղարը տրամադրում է էլեկտրոնային եղանակով: Ապրանքների գնման դեպքում պայմանագրի նախագծում ներառվում է ընտրված մասնակցի կողմից հայտով ներկայացված ապրանքի ամբողջական նկարագիրը:

Կարգի 45-րդ կետով սահմանվում է, որ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն տվյալ մասնակցի տվյալները՝ **համապատասխան հիմքերով**, գրավոր ուղարկում է լիազորված մարմին, որը դրանք ստանալուն հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում նախաձեռնում է տվյալ մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

Ընթացակարգի հրավերի 1-ին մասի 9.3, 9.4 և 9.5 կետերի համաձայն՝

9.3 Ընտրված մասնակցին պայմանագիր կնքելու առաջարկը և կնքվելիք պայմանագրի նախագիծը հանձնաժողովի քարտուղարը տրամադրում է էլեկտրոնային եղանակով: Ընդ որում շինարարական աշխատանքների գնման դեպքում պայմանագրում ներառվում են ընտրված մասնակցի կողմից հայտով ներկայացված սարքերը և սարքավորումները:

9.4 **<u>Պայմանագիր կնքելու մասին պատվիրատուի ծանուցումն ընտրված մասնակցին ուղարկելու օրը հանձնաժողովի քարտուղարը համակարգի միջոցով ընտրված մասնակցի էլեկտրոնային փոստին ուղարկում է ծանուցում՝ պայմանագիր կնքելու առաջարկը տրամադրված լինելու մասին:</u>**

9.5 **Եթե ընտրված մասնակիցը պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծն ստանալուց հետո՝** 10 աշխատանքային օրվա ընթացքում չի ստորագրում պայմանագիրը և պատվիրատուին ներկայացնում որակավորման և պայմանագրի ապահովումը, ապա նա զրկվում է պայմանագիրը ստորագրելու իրավունքից: Պայմանագրով կանխավճար նախատեսվելու դեպքում սույն կետով նախատեսված ժամկետը սահմանվում է 15 աշխատանքային օր:

Այսպես, «Բնապահպանական ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկի կողմից հայտարարվել է «ՀՀ ԲԾ-Ա-ՀԲՄԱՇՁԲ-21/13-1» ծածկագրով գնման ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «ԿԻՐ-ՔԱՐ» ՍՊԸ-ն:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 21.05.2021թ. նիստի թիվ 5 արձանագրության 1-ին կետի համաձայն՝ «ՀՀ-ԲԾ-Ա-ՀԲՄԱՇՁԲ-21/13-1» ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում սույն թվականի մարտի 31-ին «ԿԻՐ- ՔԱՐ» ՍՊԸ-ն ճանաչվել է ընտրված մասնակից:

Սույն թվականի **<u>Ապրիլի 28-ին վերոնշյալ մասնակցին ներկայացվել է պայմանագիր կնքելու առաջարկ և պայմանագրի նախագիծը:</u>** Մասնակցին տրվել էր 15 աշխատանքային օր՝ պայմանագրային երաշխիքների և իր կողմից հաստատված պայմանագրի ներկայացման համար, քանի որ մրցույթի հրավերով նախատեսված է եղել կանխավճար (ՀՀ գնումների մասին օրենք՝ 36-րդ հոդված 3-րդ մաս):

Սույն թվականի մայիսի 19-ին՝ ժամկետի ավարտի օրը, ընտրված մասնակցի կողմից չի ներկայացվել անհրաժեշտ փաստաթղթերից և ոչ մեկը:

Նույն արձանագրության 2-րդ կետի համաձայն՝ գնահատող հանձնաժողովը, հիմք ընդունելով ՀՀ գնումների մասին օրենքի 36-րդ հոդվածի 2-րդ մասի, 34-րդ հոդվածի 7-րդ մասի և 31-րդ հոդվածի 1-ին մասի դրույթները, մերժել է «ԿԻՐ-ՔԱՐ» ՍՊԸ-ի հայտը և ընտրված մասնակից ճանաչել գնման ընթացակարգի շրջանակներում 2-րդ տեղ զբաղեցրած մասնակցին՝ «ՄԵՐՁՄՈՍԿՈՎՅԱՆ» ԲԲԸ-ին:

«Բնապահպանական ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկը, ղեկավարվելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 45-րդ կետի դրույթով, 31.05.2021թ. թիվ 1-01/27Ա/157 գրությամբ լիազորված մարմին է ներկայացրել Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի թիվ 5 արձանագրությունը, որով Ընկերության հայտը մերժվել է, և որոշ փաստաթղթեր:

Միևնույն ժամանակ Պատվիրատուն ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 31.05.2021թ. թիվ 1-01/27Ա/157 գրությամբ հայտնել է, որ «ՀՀ ԲԾ-Ա-ՀԲՄԱՇՁԲ-21/13-1» ծածկագրով գնման ընթացակարգի շրջանակներում **սույն թվականի ապրիլի 28-ին գնման ընթացակարգի ընտրված մասնակցին՝ «ԿԻՐ-ՔԱՐ» ՍՊԸ-ին, գնահատող հանձնաժողովի քարտուղարի կողմից ուղարկվել է պայմանագիր կնքելու առաջարկը և պայմանագրի նախագիծը:**

Գործի լուծման համար էական նշանակություն ունեցող փաստը, որով կապացուցվեր պայմանագիր կնքելու առաջարկը և կնքվելիք պայմանագրի նախագիծը Ընթացակարգի քարտուղարի կողմից Ընկերությանն ուղարկած լինելը, **Պատվիրատուի կողմից չի ներկայացվել:**

Մինչդեռ Կարգի 45-րդ կետի համաձայն՝ Պատվիրատուն ՀՀ ֆինանսների նախարարության կողմից Ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ նախաձեռնելու նպատակով պետք է ներկայացներ Ընկերության տվյալները՝ **համապատասխան հիմքերով**: Տվյալ դեպքում որպես հիմք հանդիսանում է Ընկերության՝ Կարգի և Ընթացակարգի հրավերի համապատասխան պայմանագիր կնքելու առաջարկի և կնքվելիք պայմանագրի նախագծի վերաբերյալ պատշաճ ծանուցված լինելը, քանի որ Օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ Ընկերության կողմից պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծը ստանալուց հետո է միայն հոսում 15 աշխատանքային օր ժամկետը, ինչը և

չպահպանելու դեպքում Ընկերությունը զրկվում է պայմանագիր ստորագրելու իրավունքից, որից հետո ի հայտ է գալիս Կարգի 45-րդ կետով սահմանված պահանջը:

Նշվածի արդյունքում արձանագրում եմ, որ սույն ընթացակարգի նախաձեռնման նպատակով Պատվիրատուի կողմից Ընկերությանը պայմանագիր կնքելու առաջարկի և կնքվելիք պայմանագրի նախագծի վերաբերյալ պատշաճ ծանուցած լինելու փաստը չներկայացնելու հետևանքով վիճելի է մնացել դրա գոյության փաստը:

Վերոգրյալի արդյունքում գտնում եմ, որ սույն գործի լուծման համար էական նշանակություն ունեցող փաստի բացակայության պայմաններում «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «բ» ենթակետով նախատեսված պատասխանատվությունը չի կարող վրա հասնել և հանգեցնել «ԿԻՐ-ՔԱՐ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելուն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 09.06.2021թ. թիվ 26/26-1/9256-2021 գրությամբ «ԿԻՐ-ՔԱՐ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**